Լևոնը և փքաբլիթները 4

Լևոնը շատ է սիրում փքաբլիթներ և գնացել է խանութ դրանց ետևից։ Խանութում գործում է 1+1=3 ակցիան։ Այսինքն 3 փքաբլիթ գնելու դեպքում, նրանցից ամենաքիչ արժեցողը տրվում է անվճար։ Օրինակ 1000, 1000 և 1000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 2000 դրամ, իսկ 1000, 2000 և 3000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 5000 դրամ։ Խանութում կա n փքաբլիթ։ i-րդ փքաբլիթը արժի d[i] դրամ և ունի v[i] քաղցրություն։ Լևոնը քաղցրի սիրահար է, բայց չի սիրում չարաշահել, այդ պատճառով որոշել է գնել ուղիղ 3 փքաբլիթ։ Լևոնը ունի p դրամ և ցանկանում է գնել առավելագույն գումարային քաղցրություն ունեցող 3 փքաբլիթները, որոնք նա կարող է գնել իր ունեցած գումարով։
Պահանջվում է գրել ծրագիր, որը կօգնի Լևոնին պարզել ամենաշատը ինչքան գումարային քաղցրությամբ փքաբլիթներ կարող է նա գնել։

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են n (1 <= n <= 1 000 000) և p (0 <= p <= 10^9) թվերը։ Երկրորդ տողում տրված է n թիվ դասավորված ըստ չնվազման, որոնցից i-րդը ցույց է տալիս i-րդ փքաբլիթի գինը (d[i] , 0 <= d[i] <= 10^8)։ Երրորդ տողում տրված է n թիվ, որոնցից i-րդը ցույց է տալիս i-րդ փքաբլիթի քաղցրությունը (v[i] , 0 <= v[i] <= 10^8)։

Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է տպել 1 թիվ ՝ Խնդրի պատասխանը։ Եթե Լևոնը չի կարող գնել ոչ մի 3 փքաբլիթ պետք է արտածել -1։

Օրինակ

Մուտք.
5 7000
1000 2000 3000 4000 5000
12 1 3 100 101
Ելք.
115